ՍՏԵՓԱՆ ՕՀԱՆՋԱՆԻ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ
(1873—1955)



Սույն թվականի հոկտեմբերի 9-ին, ծանր հիվանդությունից հետո, վախճանվեց Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Ստեփան Օհանջանի Կամսարականը։

Ստեփան Կամսարականը ծնվել է 1873 թվականի մայիսի 31-ին նախկին Երևանյան նահանգի Սուրմալուի գավառի Բլուր գյուղում, որը գտնվում է ոչ հեռու Իգդիրից։ Նախնական կրթությունն ստացել է գյուղական քահանայի մոտ և Իգդիրի տարրական դպրոցում, ապա սովորել է Երևանի ռուսական գիմնազիայում։

1899 թվականին Կամսարականն ավարտում է բարձրագույն կրթությունը՝ «առաջին կարգի գյուղատնտեսի» կոչումով, իսկ 1912 թվականին ներկայացնելով «Երևանյան նահանգի հողային հարկադրումը» թեմայով դիսերտացիոն աշխատանք՝ ստանում է գիտնական գյուղատնտեսի աստիճան։

Իր մասնագիտության գծով Ստեփան Կամսարականը երկար տարիներ աշխատել է Ռուսաստանի և Անդրկովկասի մի շարք նահանգներում և մարզերում։

1916—1918 թվականներին Կամսարականն աշխատում է Երևանում՝ վարելով մի շարք պատասխանատու պաշտոններ՝ Հայաստանի գյուղատնտեսության գլխավոր կառավարիչ, Հողագործության մինիստրության խորհրդի անդամ և մինիստրի խորհրդական։

Հայաստանում սովետական իշխանություն հաստատվելուց հետո, 1920 թվականի դեկտեմբերի 2-ին, Հայաստանի Հեղկոմը Կամսարականին նշանակում է Հայկական ՍՍՌ հողագործության ժողովրդական կոմիսարի տեղակալ, իսկ 1921 թվի սեպտեմբերին՝ հողագործության ժողովրդական կոմիսար։ Նույն թվականին Կամսարականը գործուղվում է Թիֆլիս՝ մասնակցելու Անդրկովկասյան հանրապետությունների սահմանագծերի հաստատման աշխատանքներին։

Այնուհետև 1922 թվականից մինչև 1924 թվականը նա վարում է պատասխանատու պաշտոններ իր մասնագիտության գծով։ Կամսարականը զգալի դեր է կատարել նաև Հայաստանում մասնագետ կադրեր պատրաստելու ասպարեզում։ Սկսած 1924 թվականից մինչև 1931 թվականը նա դասախոսել է Երևանի Պետական համալսարանի Գյուղատնտեսական ֆակուլտետում, ինչպես և Երևանի Գյուղատնտեսական ինստիտուտում, ղեկավարելով միաժամանակ հիշյալ հիմնարկներում ընդհանուր հողագործության և տեխնիկական կուլտուրաների ամբիոնների աշխատանքները։

Ստեփան Կամսարականը տարել է նաև հասարակական աշխատանք։ 1929-ից մինչև 1930 թվականը նա հանդիսացել է Հայաստանի Կենտրոնական գործադիր կոմիտեի անդամ, աշխատակցել է զանազան գիտական հանդեսների՝ գրելով մասնագիտական հոդվածներ հայերեն և ռուսերեն լեզուներով։

1945 թվականի գարնանը գումարված Ազգային-եկեղեցական ժողովը Ստեփան Կամսարականին ընտրում է Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ։

Իր մոտ 60-ամյա պաշտոնավարության ընթացքում Կամսարականը միշտ եղել է բարեխիղճ, պարտաճանաչ և անձնվեր պաշտոնյա։ Սույն թվականի սեպտեմբերին Էջմիածնում գումարված Ազգային-եկեղեցական ժողովը նկատի ունենալով Կամսարականի՝ Մայր Աթոռի նկատմամբ ունեցած նվիրվածությունը, նրան ընտրեց Գերագույն Հոգևոր Խորհրդի պատվավոր անդամ։